ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ք. Վանաձոր, ՀայքիՀրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ_____

« _____» _____ 2024թ.

«ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
Գ. ՔՈԹԱՆՋՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քոթանջյան.

Ի պատասխան Ձեր սույն թվականի 19.11.2024թ. թիվ 1320230 գրությանը.

Հայտնում եմ Ձեզ, որ Ձեր գրությամբ բարձրացված հարցերը քննարկվել է Սպիտակ համայնքի ղեկավարի հետ:

Ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Տեղական ինքնակառավարման մարմինների օրվա՝ նոյեմբերի 10-ի կապակցությամբ, ավագանու բոլոր անդամների համար նախատեսված է եղել հյուրասիրության, ծաղկային կոմպոզիցիաների և հուշանվերների ձեռք բերում, բացառությամբ համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանի և առաջին տեղակալ Արտակ Մաթոսյանի: Սակայն, հաշվի առնելով, որ 12.11.2024թ.-ին ավագանու 27 անդամներից նիստին ներկա են եղել 16-ը՝ նվերները տրամադրվել են նիստին ներկա ավագանու անդամներին՝ բացառությամբ համայնքի ղեկավարի և առաջին տեղակալի:

Համայնքի բյուջեից միջոցառումը կազմակերպելու նպատակով ընդհանուր ծախսվել է 173 040 ՀՀ դրամ՝ ծաղկային կոմպոզիցիա՝ 5 հատ x 13 000դր. = 65 000 ՀՀ դր., ձեռքի ժամացույց Nikolay՝ 9 հատ x 10 000դր. = 90 000 ՀՀ դր., ժամացույցի տուփ՝ 9 հատ x 300դր. = 2 700 ՀՀ դր., հյուրասիրություն 1 հատ x 15 340դր. = 15 340 ՀՀ դր.:

Գնումները կատարվել են երկու տարբեր ԱՁ-ներից ավագանու նիստի օրը՝ ավագանու նիստի մասնակցության գրանցման թերթիկի հիման վրա:

Նվերները հանձնվել են ավագանու նիստի օրը, իսկ նիստը առցանց հեռարձակված է:

X _____

Հարգանքով՝ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

կատ. ՏԿ և ՏԻ հարցերի վարչության ավագ մասնագետ Տ. Ավետյան
հեռ. /0322/ 2-21-04